ՀՆԱԳՈՒՅՆ ԷԹՆԻԿԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ Մ. Թ. Ա. III—I ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ

Հ. Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հին արևելքի ցեղերի ու ցեղախմբերի տեղաշարժերը, նրանց միջև ռազմաքաղաքական փոխհարաբերությունները, առևտրական ու մշակութային կապերը մասամբ հանգեցնում էին ցեղախմբերի խառնակվելուն ու նոր, ավելի բարդ էթնիկական միավորումներ ստեղծելուն։

Մոտավորապես մ. թ. ա. III հազարամյակի սկզբներից Արաբական թերակղզուց դեպի հյուսիս տեղի են ունեցել սեմական քոչվոր ցեղերի չորս հիմնական տեղաշարժ[1]։

Առաջին տեղաշարժի մասնակիցները հանդիսացան աքքադական ցեղերը։ Սրանք բնակություն հաստատեցին Իրաքի հյուսիսային շրջաններում և այնտեղից էլ դրանց մի մասը, խաղաղ ճանապարհով, հետզհետե տարածվեց հարավային Միջագետքում, որտեղ արդեն կազմավորվել էին շումերական Էրեդու, Ուռ, Ուրուք, Լագաշ, Լարսա, Քիշ, Շուրուպպակ, Նիպպուր և մի շարք այլ քաղաք-պետություններ։ Դարերի ընթացքում շումերները ձուլվեցին և նրանց լեզուն դուրս մղվեց, իր տեղը զիջելով աքքադերենին։ Սակայն շումերական մշակույթը, թեև որոշ փոփոխությամբ, ամբողջությամբ փոխանցվեց աքքադացիներին։

Մ. թ. ա. XXIII դարի վերջում[2] Իրանական լեռնաշխարհի արևմտյան տարածքից Միջագետք ներխուժեցին կութիական՝ իրանական ցեղախմբերը։ Մ. թ. ա. XXII դարի I կեսին նրանց հաջողվեց իրենց իշխանությունը հաստատել Միջագետքում։ Սակայն կութիները ձուլվեցին, ոչ մի ազդեցություն չթողնելով աքքադական լեզվի ու մշակույթի վրա։ Հետագայում, նույն ճակատագրին արժանացան նաև Բաբելոնում շուրջ 6 դար (մ. թ. ա. XVIII—XII դդ.) իշխող իրանական կասիտները։

Աքքադական ցեղերի շարժմանը հաջորդող երկրորդ գաղթը Արաբական թերակղզուց ամորիական ցեղերի գաղթն է։ Այս ցեղախմբերը շարժվեցին հիմնականում դեպի Սիրիայի և Պաղեստինի տափաստանները։ Այստեղից էլ հետագայում նրանց զանգվածները տարածվեցին Միջագետքում, որտեղ XXI դարի վերջում արդեն սկսեցին հաստատել իրենց դինաստիաները[3]։ Ուշադրության արժանի է նաև այն փաստը, որ ամորիները տարածվել են նաև Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան շրջաններում։ Այս կապակցությամբ կարևոր տեղեկություններ են պարունակում մ. թ. ա. XIX—XVIII դարերին վերաբերող կապադովկյան և մարիի արձանագրությունները։ Կապադովկյան աղյուսակներից մեկը հիշատակում է «Նիխրդիայի երկու ամո-

---

1 *4-րդ տեղաշարժը դա արաբական ցեղերի շարժումն է, որը դուրս է մնում մեր ուսումնասիրության շրջանակից։*

2 *Աքքադի Շառ-Կալի-Շառի թագավորի (մ. թ. ա. 2200—2176 թթ.) իշխանության ժամանակ։*

3 *Սիրիայի և Փյունիկիայի բնակչության էթնիկական կազմը մինչ սեմական տարրի տարածվելը մնում է անորոշ (տե՛ս* I. J. Gelb. The Early History of the West Semitic Peoples.—JCS, XV, 1961, I, p. 40):

րի-ներին»—(a)-na a-mu-ri-en sa Ni-iḫ-ri-a[4] *իսկ Մ-րիի -րխիվում հիշվում է «Բ-նում-Ադադ Նիխրի-յի (Թագավորը)»* -Bu-nu-ma-[D]Adad (LUGAL ša) Ni-iḫ-ri-a[5]. *Նիխրիան նույն խեթական*[6] *և ասուրական աղբյուրների*[7] *Նիխիրիա քաղաքն է, որը հիշատակվում է նաև ուրարտական արձանագրություններում, որպես Վերին Տիգրիսի և Սասունի միջև գտնըվող Արմե երկրի թագավորական քաղաքը*[8] *և նույնացվում է հայկական միջնադարյան Նփրկերտ քաղաքի հետ*[9]*։ Այսպիսով, հայտնի է դառնում, որ դեռևս մ. թ. ա. III հազարամյակի վերջում սեմական ցեղերի զանգվածները հասել են նաև Հայկական լեռնաշխարհ և առաջին անգամ անմիջականորեն շփվել մեր նախնիների հետ։*

Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան շրջանները և Հյուսիսային Միջագետքը, ինչպես վկայում են շումերական՝ Ադաբի Լուգալանիմունդու (III հազարամյակի կեսերին), Լագաշի Էաննատում (շուրջ մ. թ. ա. 2400 թ.), թագավորների և աքքադական Սարգոն թագավորի (մ. թ. ա. 2316—2261 թթ.) ու Նարամսինի (մ. թ. ա. 2236—2200 թթ.) արձանագրությունները, դեռևս մ. թ. ա. III հազարամյակի կեսերին բնակեցված են եղել շուբարական ցեղախմբերով[10]*։*

Շուբարիների գլխավոր կենտրոններից մեկը Թիլ-Հալաֆն է (Հյուսիսային Միջագետքում)[11]*։ Այս բնակավայրը հայտնի է գունազարդ խեցու հալաֆյան կոչված մշակույթով։ Նույն մշակույթով հարուստ է նաև Վանա լճի արևելքում գտնվող Շամիրամ-Ալթի բնակավայրը*[12]*։ Գրավոր աղբյուրի բացակայության պատճառով դժվար է որոշել շուբարիների տարածման ոլորտը Հայաստանում։ Սակայն հայտնի է, որ հալաֆյան կոչված գունազարդ խեցու մշակույթը տարածված է նաև Հայաստանի տարբեր բնակավայրերում, ինչպիսիք են Թեղուտը (Էջմիածնի շրջանում), Քյուլ-Թափան (Նախիջևանում, Արաքսի ափին), Խարբերդը, Մալաթիան և այլն*[13]*։ Հայկական լեռնաշխարհում հալաֆյան մշակույթի հուշարձանների գոյությունը հնագետների կարծիքով արդյունք է մի կողմից Հայաստանի և Հյուսիսային Միջագետքի բնիկների որոշակի խմբերի էթնիկական միասնության, մյուս կողմից Հայ-*

---

[4] (British Museum), Cuneiform Texts from Cappadocian Tablets in the British Museum. 11, London, 1921, 49a. 13f; I. J. Gelb. Hurrians and Subarians, Chicago 1944, p. 62.

[5] G. Dossin. Studia et documenta ad iura Orients Antiqui pertinentia. II. 1939, 116 f; I. J. Gelb. HS, p 62:

[6] KBo; IV, 14:

[7] АВИИУ, № 40:

[8] УКН, № 156:

[9] Б. Б. Пиотровский. Ванское царство. М., 1956, с. 76. *Ի. Մ. Դիակոնովի կարծիքով, լեզվաբանության տեսանկյունից դժվար է հաստատել Նիխիրիայի և Նփրկերտի նույնությունը, չնայած տեղագրական իմաստով նա այդ հավանական է համարում* (ПАН, с. 227)։ *Մ. Ս. Աստուրի կարծիքով Նիխիրիան նույն արամեական Ամեդու քաղաքն է (հերկ. Դիարբեքիր)։*—*Տես* M. C. Astour. The Arena of Tigiath-Pileser III's Campaign against Sarduri II (743 B. C.).—Aššur, II (1979) № 3, p. 5. *Սակայն Ամեդուն և Նիխրիան հիշատակվում են ասուրական միևնույն արձանագրության մեջ* (АВИИУ, № 40), *ուստի դրանց նույնությունը բացառվում է։*

[10] A. Ungnad. Subartu. Berlin-Leipzig, 1939, s. 37, 41; I. J. Gelb. HS, p. 33—34.

[11] A. Ungnad. Subartu, S. 163

[12] *Հայ ժողովրդի պատմություն. I, Երևան, 1971, էջ 113—116։*

[13] *Նույն տեղում։*

կական լեռնաշխարհի վաղ երկրագործների ու միջագետքյան ցեղերի միջև ժամանակին իրականացված տնտեսական ու մշակութային կապերի[14]։

Շուբարական «բարդ լեզվի», ինչպես վկայում է Բաբելոնի թագավոր Համորաբիին[15] (մ. թ. ա. 1792—1750 թթ.) և շուբարական բնակչության պատկանելության հարցը մնում է անորոշ։ Հին բաբելական արձանագրություններից հայտնի են բազմաթիվ շուբարական անձնանուններ՝ Addabuni, Barbaragi, Bulbat, Bušet, Iabrat, Dašak, Dulia, Garadadu, Iušanak, Kimani, Kuzuzu, Lulu, Madatina, Kaši, Sinini, Šebba, Šušuk, Zubus, Zuizura, Zigume, Ribam-Ili, ŠAL Buzuš, ŠAL Mamma, ŠAL Ummi—DHebit և այլն[16]։ Այս անձնանունները մասամբ առ այսօր չեն ստուգաբանվում[17]։ Հետաքրքրական է նաև, որ խուռիական ճանաչված Թեշուբ աստվածը, Բողազքեոյից գտնված խուռիական արձանագրությունում հանդիսանում է շուբարական՝ Šu-ub-ri-ia-na-aš DU-up-aš «շուբրիական Թեշուբը»[18]։ Սա ցույց է տալիս, որ այս աստվածը սկզբնական շրջանում պաշտվել է շուբարիների կողմից, իսկ հետագայում անցել է խուռիներին և ուրարտացիներին։

Շուբարական անձնանունների մի մասը՝ Շեբբա, Շուշուկ, Զուրզուր, Մամմա[19], Ումմի-խեբեթ[20], հիշատակվում է Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան տարածքում[21]։ Ուստի դրանց և մյուս շուբարական բառերի ստուգաբանությունը կարևոր է հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության տեսանկյունից։

Ինչպես Շումերում, այնպես էլ Շուբարտուում իշխում էին ensi-ին համանման տիտղոս ունեցող իշխանները[22]։ Այս փաստը վկայում է, որ Հայկական լեռնաշխարհում, մասնավորապես հարավ-արևմուտքում, դեռևս մ. թ. ա. III հազարամյակում ստեղծվել էին այնպիսի քաղաքական միավորումներ, ինչպիսիք էին շումերական քաղաք-պետությունները, որոնք ունեին իրենց բանակը, օրենքը և պետական մյուս համակարգերը։

Շուբարական իշխանները բազմիցս ենթարկվել են շումերական, աքքադական և բաբելական թագավորների հարձակումներին[23], սակայն պաշտպանվել են և ժամանակի ընթացքում է՛լ ավելի համախմբվել ու հզորացել. այսպես օրինակ, եթե մ. թ. ա. III հազարամյակի վերջում Մարիի թագավոր Իշբի-Իրան (ժամանակակից է Ուր III դինաստիայի թագավոր Իբբի-Սինին, մ. թ. ա. 2027—2003 թթ.) ներխուժում է Շուբարտու և գերեվարում

---

14 Ռ. Մ. Թորոսյան. Թեղուտի վաղ երկրագործական բնակավայրը. Երևան, 1976, էջ 16։

15 A. Ungnad. Subartu, S, 48, I. J. Gelb. HS, p. 41:

16 I. J. Gelb. HS, p. 100—107:

17 Նույն տեղում, էջ 108։

18 KUB XXVII 46; 19, 25 f, 27, 30, 31 I. J. Gelb. HS, p. 30.

19 ŠAL Mamma—շուբարուհի է, որպես ստրկուհի Հարավային Միջագետք է բերվել Bi-da-ra^KI քաղաքից, իսկ Բիդարան նույնացվում է Աշշուրնաձիրապալ II-ի (883—859 թթ.) տարեգրության Pidara, Pitura քաղաքի հետ, որը գտնվել է Հայկական լեռնաշխարհում, Տիգրիսից հյուսիս և Դիարբեքիրից դեպի արևելք ընկած շրջանում (ARI, II, № 571, 640, 573); E. Forrer. Provinzeinteilungen des assyrischen Reiches. Leipzig, 1921, S. 30, 85.; I. J. Gelb. HS, p. 106.

20 Ի. Գելբի կարծիքով եբեթ գիցուհին ծագումով հին անատոլիական է կամ հին միջագետքյան (I. J. Gelb. HS, p. 107):

21 Նույն տեղում, էջ 40, 104, 106։

22 Նույն տեղում, էջ 105։

23 A. Ungnad. Subartu, S. 37—43; I. J. Gelb. HS, p. 32—41.

է Շուբարտուի Zigume էնսիին[24], ապա XVIII դարի սկզբին, նույն Մարիի, այս անգամ Զիմրիլիմ թագավորը համարձակվում է արշավել Շուբարտու միայն Բաբելոնի Համորաբի թագավորից 3000 զինվոր ռազմական օժանդակ ուժ ստանալուց հետո[25]։

Մ. թ. ա. III հազարամյակի վերջում Հայկական լեռնաշխարհում նոր փոփոխություններ են կատարվում։ Սև փայլեցրած խեցու մշակույթը Հայկական լեռնաշխարհի տարբեր մասերից որոշ ցեղախմբերի տեղաշարժի հետևանքով ներթափանցում է Արևելքի նշանավոր կենտրոններ՝ Կիլիկիա (Մերսին բնակավայրը), Հյուսիսային Սիրիա (Ամուկ 2-րդ և 1-ին շերտերը), Պաղեստին (Կիրբեթ-Կերակ, Բեթ-Շեն), Ուրմիո լճի արևելյան և արևմտյան շրջանները՝ Գեոյ-Թեփե, Յանղ-Թեփե և այլ բնակավայրեր[26]։ Այս մշակույթի տարածման ոլորտում, մասնավորապես Սիրիայում, Պաղեստինում, որտեղ արդեն վաղուց տարածված էր սեմական տարրը, և շատ այլ բնակավայրերում, ինչպես վկայում են սեպագիր աղբյուրները, դեռևս մ. թ. ա. XIX—XVIII դդ. տարածված են լինում խուռիական ցեղախմբերը[27]։ Սա թույլ է տալիս եզրակացնել, որ սև փայլեցրած խեցիի մշակույթը նաև խուռիական է և խուռիների միջոցով է տարածվել հիշյալ բնակավայրերում։

Ժամանակի ընթացքում հաստատվում են խուռիական դինաստիաներ Ուրկիշում (Հյուսիսային Միջագետք), որտեղ սկսում է իշխել Թիշարի քուրմը, Արափխայում (Տիգրիսից արևելք՝ Ադեմ գետի ափին), Եփրատից դեպի արևմուտք գտնվող Խասսուվա, Ուրշու, Շենամ, Մա'մա քաղաքներում, Կիցցուվատնայում (Կիլիկիայի տարածքում), Խուվայում (Ծոփք), Ալղիում (Աղձնիք), Շուբրիայում (Սասունի տարածք)։

Մ. թ. ա. XVII դարի կեսին խուռիների տարածման ոլորտում, մասնավորապես Հյուսիսային Միջագետքում, ստեղծվում է քաղաքական նոր իրադրություն։ Այստեղ տարածվում են հնդարիական ցեղախմբերը, որոնց հաջողվում է համախմբել խուռիական մի շարք դինաստիաներ և ստեղծել Միտաննի-Խանիգալբատ. հնդարիական դինաստիա ունեցող հզոր խուռիական մեկ թագավորություն, որը գոյատևեց շուրջ 4 դար։

Այս ընթացքում Արաբական թերակղզուց դեպի Սիրիայի տափաստանները շարժվում են արամեական ցեղերը։

Մ. թ. ա. XIV դարի վերջում Ասուրեստանը բավականին հզորացել էր և պատրաստվում էր արշավել Հյուսիսային Միջագետք և Հայկական լեռնաշխարհի հարավային շրջաններ։ Կադմուխիի և Միտաննների թագավորները դիմում են արամեական ցեղերի ռազմական օգնությանը[28]։ Այս հանգամանքը նաև հնարավորություն տվեց արամեական ցեղերին խաղաղ ճանապարհով տարածվել Հյուսիսային Միջագետքի և Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան ազատ արոտավայրերում։

Աղբյուրների վկայությամբ, մ. թ. ա. XI դարի սկզբին արամեական ռազմական ջոկատները Ասուրեստանի լծից ազատագրում են Սինաբու, Տիդու և Նաիրի երկրի մյուս բերդերը[29]։ Սինաբուն և Տիդուն գտնվել են Վերին Տիգրիսի արևելյան մասում[30], այսինքն Տիգրիսի և Նիխիրիայի (Նփրկեռտի) միջև ընկած շրջանում։ Սա հենց այն տարածքն է, որտեղ մ. թ. ա. XIX—

---

24 I. J. Gelb, HS, p. 105.

25 Նույն տեղում, էջ 41։

26 Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, 1971, էջ 139։

27 Г. М. Аветисян. Государство Митанни. Ереван, 1984, с. 9—10.

28 Г. М. Аветисян. Северная Месопотамия и юго-западные области Армянского нагорья в период образования арамейских княжеств (XIII—IX вв. до н. э.) с. 11—12. (աշխ. տպագրվում է).

29 Նույն տեղում, էջ 26—27։

30 Н. В. Арутюнян. Биайнили (Урарту). Ереван, 1970, с. 87.

XVIII դդ. հաստատվել էր ամորիական դինաստիա և նույն տարածքն է, որտեղ մ. թ. ա. VIII դարի վերջում հիշատակվում է ուրարտական աղբյուրների Արմե երկիրը իր Նիխիրիա թագավորական քաղաքով[31]։ Arumu արամեական ցեղանունը հիշատակվում է ասուրական սեպագիր աղբյուրներում տարբեր հոլովական ձևերով KUR a-ru-mu MEŠ (ուղղ. հոգ.) KUR a-ri-me MEŠ (սեռ. հոգ.) KUR a-ra-ma (հայց. հոգ.), իսկ բաբելական և ուշ ասուրական տեքստերում KUR a-ra-mu, KUR a-ra-me, KUR a-ra-ma: Ելնելով նաև այն փաստից, որ արամեացիները ապրել են այն շրջաններում, որտեղ հիշատակվում է ուրարտական Արմե երկիրը, կարելի է պնդել, որ արամու, արիմե արամեական ցեղանունից է ծագել ուրարտական տեքստերի Արմե երկրի անունը, ճիշտ այնպես, ինչպես որ գրականության մեջ ընդունված է՝ ասուրական տեքստերի ուրումու ցեղանունից առաջացել է Մուշի տարածքում հիշատակվող ուրարտական աղբյուրների Ուրմե երկրի անունը[32]։

Իսկ ովքե՞ր են ուրումեացիները։

Ս. Տ. Երեմյանը ուրումեացիներին նույնացնում է հունական աղբյուրների արիմների հետ։ Նա գտնում է, որ ուրումա հայկական ղեկավար ցեղերից մեկի անունն է, որը մ. թ. ա. XII դարում Հայասա-Խաթե երկրից գաղթել է Շուբրիա[33]։ Ի. Մ. Դյակոնովի կարծիքով մուշքերը (արևելյան) և ուրումեացիները նախահայերեն լեզվով խոսող ցեղեր են, որոնք, ըստ նրա, մ. թ. ա. XII դարի առաջին կեսին ավերեցին խեթական պետությունը և շարժվեցին դեպի Վերին Եփրատի և Ստորին Արածանիի հովիտները[34]։

Խեթական թագավորների արձանագրություններից հետևում է, որ մ. թ. ա. XIV—XIII դդ. ընթացքում Հայկական լեռնաշխարհի արևմտյան և հարավ-արևմտյան տարածքում գոյություն ունեին Հայասա-Ազզի, Թեգարամա, Մալդիա (Մելիդ), Կումմախա (Կոմմուխ), Իսուվա (Իշուա), Ալզի (հայկ. Աղձնիք) կարևոր ուժ ներկայացնող երկրները, որոնք արևմուտքից սահմանակից էին խեթական պետությանը, իսկ հյուսիսից՝ կասկեր-աբեշլացիներ ցեղային միությանը[35]։

Մ. թ. ա. XIII դարի կեսերից սկսած վերոհիշյալ երկրներից միայն Հայասա-Ազզիի անունը այլևս չի հանդիպում, թեև նրա անկման կամ ոչնչացման մասին տեղեկություն մեզ չի հասել։

Որպես խեթական երկրե մարդիկ, կասկերի-աբեշլացիների հարևանությամբ առաջին անգամ մ. թ. ա. XII դարի սկզբին ասուրական աղբյուրներում հիշատակվում են իրենցից կարևոր ուժ ներկայացնող ուրումեացիները[36]։

Կասկեր-աբեշլացիները բնակվում էին Սև ծովի հարավ-արևելյան մերձափնյա շրջանում։ Նրանցից դեպի արևելք և հյուսիս-արևելք ընկած տարածքը հեռու էր խեթական ազդեցության ոլորտից և չէր կարող խեթական երկիր համարվել։ Կասկերից դեպի հարավ-արևմուտք բուն խեթական երկիրն էր, ուրեմն մնում է կասկերի հարավային մասը, որտեղ, ըստ ասուրական աղբյուրների, կարող էին ապրել վաղեմի հարևան ուրումեացիները, այսինքն

---

31 УКН, № 156, DI+DII11.

32 Ս. Տ. Երեմյան. Հայերի ցեղային միությունը Արմե-Շուպրիա երկրում.—«Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 3, էջ 70—72; И. М. Дьяконов. ПАН, с. 226—228։

33 Նույն տեղում, էջ 61, 68, 70, 72։

34 И. М. Дьяконов, ПАН, с. 227.

35 Այն երկրները, որոնք ընկած էին Կարկեմիշից մինչև Սև ծովի ափերը, ներառյալ Հայկական լեռնաշխարհի արևմուտքը, և որոնք երբեմն գտնվում էին խեթական պետության ազդեցության ներքո, մ. թ. ա. XII դարի սկզբին ասուրական աղբյուրներում դիտվում են որպես խեթական երկրներ (AKA, p. 47, 118):

36 AKA, p. 48. 112, 117; ARI, II, № 18. 67, 93:

այնտեղ, որտեղ ըստ խեթական աղբյուրների մինչև այդ հիշատակվում էին հայասացիները։ Հետևաբար, այստեղ տեղի է ունեցել անունների փոփոխություն։ Խեթական աղբյուրներում հիշատակված հայասացիները ասուրական արձանագրություններում ստանում են ուրումեացիներ անվանումը։ Այս եզրակացությունը հիմնավորվում է նաև մեկ այլ փաստով՝ Թիգլաթպալասար I-ի տարեգրության մեջ «ուրումեացիներ» ցեղանունը ունի նաև «ուրուացիներ» ցեղանվան տարբերակը[37]։ Այս վկայությունը մեզ հիշեցնում է Հայասա-Ազզիի արևմուտքում գտնվող Ուրա քաղաքը, որն ըստ խեթական Մուրսիլի II թագավորի եղել է առաջնակարգ, ամուր և ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող բերդաքաղաք[38]։ Հետևաբար, Հայասա-Ազզիի տարածքում հիշատակվող «ուրուացիները» ըստ էության նույն հայասացիներն են, որոնք իրենց անվանումը կարող էին ստանալ միայն Ուրա քաղաքի անունից։ Հայասա-Ազզիի ռազմական ուժերը կուտակված էին արևմտյան բերդերում՝ խեթական թագավորների հարձակումները կանխելու համար։ Մ. թ. ա. XIII դարի վերջից, երբ խեթական պետությունը անկում էր ապրում, այդ ռազմական ջոկատները պատրաստվում էին տեղաբաշխվել Հարավային սահմաններում՝ ռազմական գործողությունների ծավալման նոր գոտում, մի կողմից Հայասայի պաշտպանությունը ապահովելու, մյուս կողմից Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան տարածքում Ասուրեստանի դեմ իշխանությունների մղած ազատագրական պայքարին մասնակցելու նպատակով։ Այս կապակցությամբ ուշագրավ է Թիգլաթպալասար I-ի տարեգրության հետևյալ հատվածը (100)... 4000 KUR Kas-ka-la MEŠ (101) KUR U-ru-ia MEŠ EREN MEŠ KUR Ḫa-at-te-e (102) ia ma-gi-ri sá i-na da-na-ni-šu-nu (Col. III-1) URU MEŠ-ni sa KUR Šu-bar-ti da-gil (2) pa-an DA-šur EN-ia iṣ-ba-tu... «...4000 կասկեր և ուրուացիներ, խեթական երկրի անհնազանդ մարդիկ, որոնք իրենց ուժով նվաճել էին (իրականում ազատագրել էին—Հ. Ա.) իմ տիրոջ՝ Աշուրին ենթակա Շուբարտու երկրի քաղաքները»։[39]

Տարեգրության մյուս հատվածներում կարդում ենք. «...4000 ուրումեացիներ և աբեշլացիներ խեթական երկրի մարդիկ...»[40]։

Թիգլաթպալասարի հաղորդագրությունից հետևում է, որ ուրուական (հայասական) ջոկատներին միանում են նաև կասկերի (աբեշլացիներ) զորամիավորումները։ Միավորված ուժերը շարժվում են դեպի հարավ, հավանաբար Կարին-Մուշ առևտրական ճանապարհով։ Նրանց աջակցության շնորհիվ Ասորեստանի լծից ազատագրվում են Սասունի տարածքում գտնըվող Շուբրիա երկրի քաղաքները։

Այս ընթացքում Շուբրիայի հարևան Ալզի, Պուրուլումզի և Կադմուխի երկրները իրենց հերթին դիմել էին մուշկերի ռազմական օժանդակությանը և դուրս էին մղել ասուրեստանցիներին իրենց երկրի սահմաններից[41]։ Այս իրադարձությունները, ըստ Թիգլաթպալասար I-ի, տեղի են ունեցել իր գահակալումից 50 տարի առաջ, մոտավորապես մ. թ. ա. 1165 թ.[42]։ Սակայն իրականում դրանք տեղի են ունեցել ավելի վաղ, մոտավորապես մ. թ. ա. XIII դարի վերջում—XII դարի սկզբում, քանի որ Թուկուլտինինուրտա I-ի (մ. թ. ա. 1244—1208 թթ.) իշխանությունից հետո մինչև Թիգլատպալասար

---

37 AKA, Col. 11, 101, p. 48:

38 Гр. Капанцян. Хайаса-колыбель армян. Ереван, 1947, с. 51.

39 AKA, Col.II, 100—102, Col. III 1—2, p. 47—48; ARI, II, № 18.

40 AKA, p. 112, 117; ARI, II, № 67, 93.

41 AKA, p. 35.

42 Նույն տեղում։

1-ի (մ. թ. ա. 1115—1077 թթ.) գահ բարձրանալը, շուրջ մեկ դար, Ասուրեստանը խիստ թուլացած էր և կորցրել էր իր ազդեցությունը հարևան երկրներում։ Այս ընթացքում Հայկական լեռնաշխարհում ստեղծվել էր խաղաղ քաղաքական իրադրություն։ Այս պայմաններում էլ կազմավորվեց Ուրմե-Շուբրիա կամ Հայասա-Շուբրիա առաջին հայկական պետական միավորումը, որը հետագայում ենթարկվեց ասուրական, իսկ այնուհետև ուրարտական թագավորների հարձակումներին, բայց և այնպես պահպանեց իր դոյությունը և դարերի ընթացքում, մասնավորապես մ. թ. ա. VII դարի վերջում, Ասուրեստանի և Ուրարտուի անկումից հետո, իր մեջ ներառավ ինչպես մուշքերին ու մյուս էթնիկական կազմավորումներին, այնպես էլ ամբողջ Ուրարտական պետությունը։ Ուրմե-Շուբրիա (Հայասա-Շուբրիա) նորաստեղծ հայկական մեծ պետությունը Աքեմենյան Դարեհ թագավորի արձանագրության (մ. թ. ա. 522 թ.) մեջ հիշատակվում է որպես Արմինա։

Այս նոր մեկնաբանությունները, մեր կարծիքով, մեծ հեռանկարներ են բացում հայ ժողովրդի կազմավորման և Հայկական պետության առաջացման խնդրի վերջնական լուծման համար։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

АВИИУ—И. М. Дьяконов. Ассиро-вавилонские источники по истории Урарту.— ВДИ, 1951, № 2—4.
ПАН—И. М. Дьяконов. Предыстория армянского народа. Ереван 1968.
УКН—Г. А. Меликишвили. Урартские клинообразные надписи. М., 1960.
ARI, A. K. Grayson, The Assyrian Royal Inscriptions I, II, Wiesbaden, 1972, 1976.
HS—I. J. Gelb, Hurrians and Subarians, Chicago 1944.
JCS—Journal of Cuneiform Studies.
KBo—Keilschriftrtexte aus Boghazkoi.
KUB—Keilschrifurkunden aus Boghazkoi.

ДРЕВНЕЙШИЕ ЭТНИЧЕСКИЕ ПРОДВИЖЕНИЯ И АРМЯНСКОЕ НАГОРЬЕ В III—I ТЫСЯЧЕЛЕТИЯХ ДО Н. Э.

Г. М. АВЕТИСЯН

Резюме

В статье рассматриваются процессы этнических продвижений. Отмечается факт расселения аморейских, а затем и арамейских племен на юго-западной территории Армянского нагорья, в районе между сасунскими горами и верхним течением реки Тигр. На этой же территории впоследствии, по данным урартских надписей, упоминается страна Арме, название которой происходило, с нашей точки зрения, от arumu. arime, ассирийского самоназвания арамеев. Значительное место занимает проблема происхождения урумейцев—основателей страны Урме урартских надписей. Показано, что урумейцы с древних времен жили по соседству с касками, то есть на той же территории, где по данным хеттских источников жили хайасцы. Выяснено, что urumaia—«урумейцы» ассирийских текстов имеет также вариант urula—«уруйцы», что напоминает укрепленный город Ура на западной территории Хайаса-Аззи. Как нам представляется, урумейцы-уруйцы в сущности были хайасскими военными отрядами крепости Ура и прилегающих пунктов, которые в процессе падения хеттского царства вместе с касками-абешлайцами продвинулись на юг, в зону расширения новых военных действий, с одной стороны, для укрепления обороны страны, с другой—для оказания военной помощи городам страны Шубрия, которые вели тогда освободительную борьбу против ассирийской власти.

С конца XIII в. до н. э. почти целое столетие Ассирия переживала упадок. К этому времени на юго-западной территории Армянского нагорья была образована Урме-Шубрия или Хайаса-Шубрия—первое Армянское государственное образование, которое несмотря на дальнейшие ассирийские и урартские завоевательные походы окрепло, а впоследствии, особенно в конце VII в. до н. э., в период упадка Ассирии и Урарту, включило в свой состав как этнические группы долины Верхнего Евфрата, так и потомков всего урартского царства. И таким образом в начале VI в. до н. э. было создано великое Армянское государство, которое по данным древнеперсидских источников называлось Армина.

EARLY ETHNIC MOVEMENTS AND THE ARMENIAN HIGHLANDS IN III—I MILLENNIUM B. C.

H. M. AVETISSIAN

Summary

In the present article, the author discusses the processes of a number of ethnic movements. He suggests the settling of the Amorian and then the Aramean tribes in the south-west of the Armenian Highlands in the region between the mountains of Sasun and the valley of the Upper Tigris. In this territory afterwards, mentioned by Urartian sources was the country of the Arme, which name arises from arumu, arime, the name of Aramean tribes. The problem concerning the origin of Urumians, founders of Urme of Urartian inscriptions is discussed. It is clear that the Urumians, from Assyrian texts, lived from ancient times in the neighbourhood of the Kaskians, on that territory, where, by Hittite texts, the Haiassians lived. Besides it has been suggested that the term KUR Urumaia MEŠ „Urumians" have the variant KUR Uruia MEŠ „Urulans". This reminds us of the Haiasian fortified city Ura in the west of the country, which was provided with a garrison whose task was to stop the Hittite army on his march towards the country. The author tries to show that the Urumians or Urulans in fact were Haiassian forces from the fortress Ura and neighbouring districts, which were engaged in the process of the fall of the Hittite State (about 1200 B. C.) together with Kaskians (Abeshiaians). They moved to the south to the zone of new military operations, on the one hand, to strengthen defence of the country, on the other hand to render military help to Shubarians, which were carring on a war of liberation against the Assyrian powers. At the end of XIII c. B. C. the migrations of tribes for a hundred long years brought about the decline of the Assyrian Empire. By that time in the south-west of the Armenian Highlands was formed Urme-Shubria or Haiasa-Shubria, the first Armenian state formation. Later this state came to be occupied by Assyrians and Urartians, but, in spite of this, preserved its existence and after the fall of the Assyrian and Urartian states entered into an alliance with other neighbouring ethnic groups and the descendants of the Urartian Kingdom. Thus at the beginning of VI c. B. C. was formed the great Armenian State—Haiastan which was at that time by Persian sources called Armina.